# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**01.04.2011թ. – 01.07.2011թ. ընկած ժամանակահատվածում քաղաքապետարանի կատարած աշխատանքները**

2011թ. երկրորդ եռամսյակում տեղական մուտքերի արդյունավետ հավաքագրման շնորհիվ հավաքագրվել է 301844.4 հազ.դրամի եկամուտ և նպատակաուղղվել քաղաքի սոցիալ-տնտեսական, հոգևոր մշակութային և առողջարանային ոլորտների հետագա առաջընթացին:

Դիլիջան համայնքի բյուջեի եկամուտների կատարողականը
01.07.2011թ. դրությամբ

| Եկամտատեսակ | Հունիսի պլանը աճողական տեքով (հազ.դրամ) | Հունիսի կատարողականը աճողական տեքով (հազ.դրամ) | Փաստացին պլանի նկատմամբ |
|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | 298365.73 | 301844.43 | 101.17% |
| 1.1 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ | 12700.00 | 12533.26 | 98.69% |
| 1.2 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ | 5000.00 | 4530.28 | 90.61% |
| ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 6881.53 | 6013.79 | 87.39% |
| ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 2544.00 | 1839.60 | 72.31% |
| 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 78931.50 | 78931.50 | 100.00% |
| 3.3 ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 13300.00 | 17087.97 | 128.48% |
| ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿ-ԻՑ ԵՎ ԾԱՌԱՅ-ՐԻ ՄԱՏՈՒՑ-ԻՑ ԵԿԱՄ-ՆԵՐ | 765.23 | 765.23 | 100.00% |
| 3.5 ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ | 7743.47 | 8237.21 | 106.38% |
| 3.6 ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒՅԺԵՐԻՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ | 1500.00 | 330.10 | 22.01% |
| ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 169000.00 | 171575.49 | 101.52% |
| ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 165000.00 | 171267.35 | 103.80% |
| ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 4000.00 | 308.15 | 7.70% |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 298365.73 | 301844.43 | 101.17% |

| | | | |
|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | 561278347.00 | 159125009.00 | 28.35 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Աղբահանում) | 18731875.00 | 15990681.00 | 85.37 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Այլ մշակութային կազմակերպություններ) | 1751625.00 | 1698710.00 | 96.98 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Արտադպրոցական դաստիարակություն) | 21717272.00 | 13421354.00 | 61.80 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ) | 390125.00 | 305000.00 | 78.18 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարություն) | 11000000.00 | 2436483.00 | 22.15 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գյուղական խորհրդատվական ծառայություն) | 15000.00 | 7500.00 | 50.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գրադարաններ) | 6437450.00 | 6208222.00 | 96.44 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Դիլիջանի քաղաքապետարան) | 91943388.00 | 32219807.00 | 35.04 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի այլ ծառայություններ) | 930830.00 | 892444.00 | 95.88 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի հանր.ծառայություններ) | 1855000.00 | 1764503.00 | 95.12 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընտանիքի անդամներ և զավակներ) | 2700000.00 | 1600000.00 | 59.26 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Թանգարաններ և ցուցասրահներ) | 7680560.00 | 5570809.00 | 72.53 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ) | 178500.00 | 178500.00 | 100.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հանգստի և սպորտի ծառայություններ) | 964000.00 | 963937.00 | 99.99 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հեռուստառադիոհաղորդումներ) | 222000.00 | 222000.00 | 100.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հրատարակչություններ,խմբագրություններ) | 152700.00 | 118496.00 | 77.60 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ճանապարհային տրանսպորտ) | 277000000.00 | 5529527.00 | 2.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Մշակույթի տներ, ակումբներ) | 16858940.00 | 5644426.00 | 33.48 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Նախադպրոցական կրթություն) | 63546850.00 | 51088966.00 | 80.40 % |

| | | | |
|---|---|---|---|
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Նավթամթերք և բնական գազ) | 5205800.00 | 0.00 | 0.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Շրջակա միջավայրի պաշտպանություն) | 1450000.00 | 1450000.00 | 100.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Սոցիալական հատուկ արտոնություններ) | 724000.00 | 724000.00 | 100.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ) | 970.00 | 0.00 | 0.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Փողոցների լուսավորում) | 25470845.00 | 10952844.00 | 43.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Քաղաքացիական պաշտպանություն) | 136800.00 | 136800.00 | 100.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ) | 4213817.00 | 0.00 | 0.00 % |
| ԸՆԴԱՄԵՆԸ ` | 561278347.00 | 159125009.00 | 28.35 % |

Քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները:01.04.2011-01,07.2011թ. ընկած ժամանակահատվածում 30 անապահով ընտանիքների տրվել է դրամական օգնություն:

Յուրաքանչյուր նորածին երեխաների համար 55 ընտանիքի տրվել է միանվագ դրամական օգնություն:

Դիլիջան քաղաքում գործող <Հույսի Կամուրջ> հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի բյուջեից յուրաքանչյուր ամիս ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն:

Մկսվել է < Հ. Տարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց> ՀՈԱԿ շենքի վերանորոգման աշխատանքները:

Պատվիրվել են Շահումյան փողոցի և Շահումյան և Մայաթ-Նովա փողոցներն իրար միացնող Շահումյան փ. 3-րդ նրբ. ճանապարհի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքներ:

Իրականացվում է Կամո 52 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գրադարանի և ակումբի համար նախատեսված շենքի վերանորոգման աշխատանքների, Երկրագիտական թանգարանի պատկերասրահի հնագիտության և ազգագրության սրահների ցուցադրության կազմակերպման և կահավորման աշխատանքների, Կալինինի 243 և Շամախյան 2Ա հասցեների բազմաբնակարան շենքերի վերելակային տնտեսությունների վերակառուցման,Մյասնիկյան 53Ա հասցեում գտնվող զուգարանի շենքի վերակառուցման և ավտոկայանին հարակից տարածքում քաղաքային զուգարանի կառուցման աշխատանքների ,Այգեստան, Ուսանողական.,Մյասնիկյան փողոցների, և Կալինինի փողոցի 2-րդ փակուղու փողոցային լուսավորության համակարգի վերանորոգման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքներ:

ՀԶՏ-ի Մոտեն Աշխատանքի Դիմաց ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքների միության կողմից հաստատվել և ներկայացվել է ծրագիր , որի շրջանակներում կատարվում է Դիլիջան քաղաքային համայնքի ենթակայության թիվ 2, թիվ 3, թիվ 5 մանկապարտեզների և երաժշտական դպրոցի մասնակի վերանորոգման աշխատանքներ: Դիլիջան քաղաքային համայնքի ներդրումը նշված ծրագրին կազմում է 1786160 դրամ ՝ նյութերի տեսքով:Մանկապարտեզների համար ձեռք է բերվել գույք՝ մահճակալ, սեղան, աթոռ:Թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզներում տեղադրվել է խաղահրապարակ և կատարվել ցանկապատի վերականգնում:

Դիլիջանի քաղաքային զբոսայգին նոր սեզոնին նախապատրաստելու , ինչպես նաև բնակիչների ակտիվ հանգիստը առավել հարմարավետ և անվտանգ դարձնելու նպատակով իրականացվել է զբոսայգու խաղային ատրակցիոնների վերանորոգման աշխատանքներ:Կատարվել է բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի նորոգման և Կամարինի 1-ին նրբ. թիվ 20 տան մոտով անցնող հեղեղատարի վերակառուցման աշխատանքներ:

Զգալի աշխատանքներ են իրականացվել լուսավորության, աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման, այն առողջարանային քաղաքին վայել կազմակերպելու ուղղությամբ:Ձեռք է բերվել և քաղաքի տարբեր փողոցներում տեղադրվել թվով 70 աղբաման:

Քաղաքապետարանի կողմից անհրաժեշտ ուշադրություն է ցուցաբերվում սպորտի զարգացմանը :Դիլիջանում անցկացվեց դպրոցականների հանրապետական 20-րդ սպարտակիադայի եզրափակիչ փուլը:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ